Հայ դատի ներկայիս համակարգի ձևավորման հոլովույթը



Հիմնադրության 80-ամյակի
և
Հայ դատի
հանձնախմբերի ու գրասենյակների
խորհրդաժողովի առթիվ

Երևան
2024

Հայ դատի կենտրոնական գրասենյակ

Բովանդակություն

Ներածություն 1

Մաս 1. Հայկական շահերի պաշտպանությունը Եվրոպայում
19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին 1

«Պրո Արմենիա» շարժումն ու պարբերականը 1

Հայ ազգային պատվիրակության կազմությունն ու աշխատանքները 3

Մաս 2. Գաղթաշխարհից՝ սփյուռք. Հայկական սփյուռքի քաղաքականացումը 4

Հայաստանի Հանրապետության պատվիրակության գործունեությունը
ՀՀ անկախության կորստից հետո 5

Մաս 3. Հայ դատի համակարգի հիմնադրությունը ԱՄՆ-ում 7

Հայկական շահերի պաշտպանությունը ԱՄՆ-ում՝ 20-րդ դարի առաջին կեսին 7

Հայ դատի հանձնախմբի ձևավորումը 8

Մաս 4. Հայ դատի հանձնախմբերի ու գրասենյակների հետագա ընդարձակումն
ու ներկայիս ցանցը 10

Հանձնախմբեր 11

Գրասենյակներ 11

Կենտրոնական խորհուրդ և գրասենյակ 11

Ռազմավարական նպատակադրումներ 11

Մարտավարական առաջնահերթություններ 12

ISBN 978-9939-1-1874-1

9 789939 118741

Պատրաստություն՝ Հայ դատի կենտրոնական գրասենյակի
Հրատարակություն՝ «Հայ դատ» հիմնադրամի
Լուսանկարները՝ բաց աղբյուրներից

Տպագրություն՝ «Օպտիմա պրինտ» տպագրատանը
Ձևավորում ու շարվածք՝ Գրիգոր Հակոբյանի

Ներածություն

Արտերկրում հայ ժողովրդի իրավունքների պաշտպանությանն ուղղված, հարաբերական, քարոզչական և, առհասարակ, հասարակական-քաղաքական բնույթի աշխատանքները, արդի հասկացությամբ՝ լոբբինգը, Հայ Յեղափոխական Դաշնակցության պայքարի ու գործունեության մաս են կազմել նրա հիմնադրության օրերից սկսած: Խոսքը վերաբերում է որպես ազատագրական պայքար մղող հեղափոխական կազմակերպություն («Պրո Արմենիա»-ի օրերին), կամ ավելի ուշ՝ որպես տվյալ երկրի քաղաքացիների կամքն արտահայտող կառույցներ՝ տարբեր պետություններում և միջազգային կազմակերպություններում հայկական հարցերի և իրավունքների իրազեկման և պաշտպանության աշխատանքներին: Այս աշխատանքների համար ՀՅԴ-ն ստեղծել է տարբեր գործիքակազմեր՝ ըստ թիրախի և քաղաքական միջավայրի, «Պրո Արմենիա»-ից մինչև Հայ դատի հանձնախմբեր:

Այս տարի լրանում է «Հայ դատի հանձնախումբ» անունով առաջին կառույցի հիմնադրման 80-ամյակը, ինչի առթիվ և, Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների հերթական խորհրդաժողովին ընդառաջ, հրատարակում ենք սույն տեղեկատվական գրքույկը:

Մաս 1. Հայկական շահերի պաշտպանությունը Եվրոպայում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին

«Պրո Արմենիա» շարժումն ու պարբերականը

1898 թ. Թիֆլիսում գումարված Հայ Յեղափոխական Դաշնակցության երկրորդ Ընդհանուր ժողովը հաստատում է 1896-1897 թթ. ՀՅԴ Կովկասի շրջանային ժողովի որոշումների մի մասը՝ արտասահմանյան քարոզչության աշխատանքի պատասխանատվությունը հանձնելով ՀՅԴ Արևմտյան Բյուրոյին (նստավայրը՝ Ժնև): Այդ օրերին ՀՅԴ կազմակերպական ցանցը ծավալվում էր Արևմտյան Եվրոպայում, 1901-1902 թթ. կուսակցության հակակշռի տակ էր Եվրոպայի հայ ուսանողական միությունը: ՀՅԴ հիմնադիրներից Քրիստափոր Միքայելյանի ներկայությունը խթան է հանդիսանում ոչ միայն պաշտոնաթերթ «Դրօշակ»-ի շուրջ համախմբելու հայ երիտասարդ հրապարակագիրներին ու գրողներին (Է. Ակնունի, Ավետիս Ահարոնյան, Ավետիք Իսահակյան, Սարգիս Մինասյան և ուրիշներ), այլև ապահովելու օտար հայասերների պարբերական աշխատակցությունը (Ֆրանսիս դը Փրեսանսե, Ուրբեն Գոհիե, Փիեռ Քիյառ, Չիբրիանի, Ռ. Կառիբալդի և այլք):[1]

ՀՅԴ Երկրորդ Ընդհ. Ժողովը որոշել էր ծավալուն թափ հաղորդել Եվրոպայում հարաբերական-քարոզչական գործունեությանը: Այդ ուղղությամբ Քրիստափորի ճիգերը պսակվում են հաջողությամբ, երբ 1900 թ. հոկտեմբերից Փարիզում սկսվում է ֆրանսերեն «Պրո Արմենիա» երկշաբաթյա հանդեսի՝ իբրև հայ ժողովուրդի դատի միջազգային օտարալեզու բանբերի հրատարակության գործընթացը: Հանդեսի խմբագիրներն ու աշխատակիցներն են դառնում ֆրանսիայի քաղաքական և գրական-մշակութային ընտրանուց՝ Փիեռ Քիյառը (խմբագրապետ), Ժան-Ժորեսը, Անատոլ Ֆրան-

PREMIÈRE ANNÉE — N° 1 — 25 NOVEMBRE 1900

Pro Armenia

paraissant le 10 et le 25 de chaque mois

Rédacteur en chef: Pierre QUILLARD
Adresser ce qui concerne la direction à M. Pierre Quillard, rue Nollet, Paris
ABONNEMENTS: France . . . . . 8 » Etranger . . . . . 10 » Le numéro 0 25

COMITÉ DE RÉDACTION:
G. Clemenceau, Anatole France, Jean Jaurès
Francis de Pressensé, E. de Roberty

Secrétaire de rédaction: Jean LONGUET
Mardi et Vendredi de 11 h. à midi, 17, rue Cujas
ADMINISTRATION: Société nouvelle de Librairie et d'Édition (Librairie G. BELLAIS) 17, rue Cujas, PARIS
TÉLÉPHONE: 801-04

SOMMAIRE
Déclaration . . . . . La Rédaction.
Pro Armenia . . . . . P. Quillard.
La Main Sanglante . . . . . G. Clemenceau.
Le Tsar et les Arméniens . F. de Pressensé.
L'Arménie devant les Congrès . . . . . Jean Longuet.

Mais si nous sommes prêts à divulguer tous les attentats du Sultan contre chacun des peuples que la mauvaise fortune fit ses sujets, nous nous attacherons plus spécialement aux souffrances arméniennes.

n'avait fait que payer une dette en décernant l'ordre impérial du Liakat à son fidèle serviteur Zekhi-Pacha, commandant du 4e corps d'armée. Cependant on continua à négocier avec le Sultan Rouge, et le temps lui fut laissé de

1 **Հրաչ Տասնապետեան**, «Հ.Յ.Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ. Ընդհ. Ժողով, (1890-1925)», Աթենք, 1988, էջ 53, 56-57

սը, Ֆրանսիս դը Փրեսանսեն, Ժորժ Քլեմանսոն, Վիկտոր Պեռարը, Յուջին Դը Ռոբերտին, Դետուրնել դը Կոնստանտը, Ուրբան Գոհին, Դենիս Կոչենը, Ժակելարդը և ուրիշներ, իսկ Անգլիայից՝ Ջեյմս Բրայսը, Իտալիայից՝ Էնրիկո Ֆերին, Չիբրիանին և այլն: Քրիստափորի կարգադրությամբ՝ տարիներ շարունակ «Պրո Արմենիա»-ի և Եվրոպական քարոզչության գործին առաջընթաց է ապահովում և այն վերահսկում ՀՅԴ հիմնադիր սերնդից բժ. Յովհաննես Լորիս-Մելիքյանը (Լորիս):

«Պրո Արմենիա»-ի հրատարակության ծախսերն ամբողջությամբ հոգում էր ՀՅԴ Արևմտյան Բյուրոն, ինչը, սակայն, բացառությամբ կուսակցական կարևոր մարմինների, հասկանալի պատճառներով գաղտնի էր պահվում այլոց համար: Թերթը 15 օրը մեկ կանոնավոր կերպով լույս էր տեսնում մինչև 1908 թ. հոկտեմբեր ամիսը: «Պրո Արմենիան», իր մի շարք հատկանիշներով (ծավալի, սյունակների խորագրերի նույնություն), հիշեցնում էր «Դրօշակ»-ի համարների բովանդակությունը. Երկրից «Դրօշակ»-ին ուղարկված թղթակցությունները թարգմանաբար լույս էին տեսնում նաև այդտեղ: Թերթն անվճար ուղարկվում էր Եվրոպայի պետական, քաղաքական, գիտական և գրական կարևոր անձնավորություններին, ինչպես նաև՝ հրապարակագիրներին և լրագրողներին:

«Պրո Արմենիա»-ին առընթեր, շնորհիվ Լորիսի հետևողական ու համառ ջանքերի, ՀՅԴ Արևմտյան Բյուրոն հաջողում է եվրոպական երկրներում ծավալել հայանպաստ աննախընթաց շարժում՝ զորաշարժի ենթարկելով ծանոթ բոլոր հայասերներին և Դաշնակցության օտար բարեկամներին, հատկապես՝ սոցիալիստական (ընկերվարական) կուսակցությունների ղեկավարներին: Շարժման ընթացքում, Հայ դատին առընթեր, կատարվում էր նաև քարոզչություն՝ ի նպաստ մակեդոնացիների և օսմանյան լծի տակ ճնշված այլ ժողովուրդների: Հարցապնդումներ և ի նպաստ հայության, միջամտության պահանջներ էին հնչում խորհրդարանների բեմերից (հատկապես՝ Ֆրանսիա, նաև՝ Իտալիա, Բելգիա, Անգլիա, Հոլանդիա, նույնիսկ՝ Գերմանիա և Ավստրիա): Փարիզում, Ժնևում և այլ մայրաքաղաքներում անցկացվում էին ժողովրդական բազմամարդ միտինգներ և ցույցեր (Ժորեսի, Մարսել Սամբայի, Պրեսանսեի և հանրածանոթ բազմաթիվ այլ դեմքերի մասնակցությամբ ու ճառերով), հայասերների միջազգային խորհրդաժողովներ: Հայանպաստ բանաձևեր էին ներկայացվում խաղաղության խորհրդաժողովներում և ընկերվարական (սոցիալիստական) կուսակցությունների համագումարներում և այլն: Այս բոլորը տեղ են գտնում 1899– 1906 թթ. ՀՅ Դաշնակցության հարաբերական–քարոզչական գործունեության պարունակում:[2]

ՀՅԴ 3-րդ Ընդհանուր ժողովը, գումարված 1904 թ. փետրվար-մարտին՝ Սոֆիայում, որոշեց հավելյալ զարկ տալ «եվրոպական պրոպագանդ»ին՝ ստեղծելով Հայասերների միջազգային մնայուն բյուրո: Ժողովը նաև նպատակահարմար չէր գտնում «Պրո Արմենիա»-ն հրատարակել նաև այլ լեզուներով: 1904-1906 թթ., Լորիսի անխոնջ ջանքերի արդյունքում, կանոնավոր կերպով շարունակվեց «Պրո Արմենիա»-ի հրատարակությունն ու «եվրոպական պրոպագանդը»:

1904 թ. Սասունի ապստամբությանը հաջորդած Օսմանյան բռնություններին դեմ Եվրոպայում հայասնպաստ հակազդեցության առիթով Վարանդյանը գրում է. «Եվրոպայէն եկած այդ համեստ աջակցությունն ալ, այնուամենայնիվ, խոշոր բան մըն էր բազմաչարչար ժողովուրդին համար: Խոշոր վաստակ մըն էր այն, որ [Ֆրանսիայի] Խորհրդարանի բոլոր շարքերը համակող այդ շարժումը – կարեկցության, ցասումի և բողոքի – հարկադրեց ողջ ֆրանսական կառավարությունը ծառանալու Եըլդըզի դեմ (և անուղղակի՝ Ռուսաստանի դեմ), բռնել դահճի արյունոտ թաթը և կանխել նոր արհավիրքները: Առանց ատոր, ոչ մի տարակույս, – և հոդ միաձայն, ներդաշնակ են բոլոր վկայությունները, հայ և օտար – առանց ատոր, 1895-1896-ի արյան բաղանիքները պիտի վերսկսեին ողջ Բիթլիսի վիլայեթին մեջ, թերևս նույնիսկ ավելի հեռուն»:[3] «Ֆրանս-անգլիական գործակցությամբ էր, և նամանավանդ Ֆրանսայի ճիգերով, որ 1904-ին Մուշ-Տարոնի հայությունը ազատեցավ մասսային նախճիրներէ»:[4]

2 **Միքայէլ Վարանդեան**, «Հ.Յ. Դաշնակցութեան Պատմութիւն», Առաջին հատոր, Փարիզ, 1932, էջ 303-314

3 **Վարանդեան**, նույն տեղում, էջ 317-318

4 **Վարանդեան**, նույն տեղում

1908 թ. հոկտեմբերի 25-ին՝ Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո, դադարում է «Պրո Արմենիա»-ի հրատարակությունը: Գրեթե նույն բովանդակությամբ, 1912 թ. դեկտեմբերից, Ֆր. դը Պրեսանսեի և Վիկտոր Բերարի խմբագրությամբ (քարտուղար՝ Ժան Լոնգե) սկսում է հրատարակությունը երկլեզու (ֆրանսերեն և անգլերեն) "Pour Les Peuples d'Orient" պարբերականի: 1913 թ. դեկտեմբերից մինչև 1914 թ. հուլիս թերթը վերստին լույս է տեսնում "Pro Armenia" վերտառությամբ:[5]

Հայ ազգային պատվիրակության կազմությունն ու աշխատանքները

Եվրոպայում ստեղծված հայամետ տրամադրությունների պայմաններում, Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդ Սուրենյանցի կոնդակով, 1912 թ. նոյեմբերին կազմվեց Հայ ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ՝ Բալկանյան պատերազմի ընձեռած բարենպաստ պայմաններում հայկական հարցը Բեռլինի կոնգրեսի մասնակից պետությունների ուշադրությանը ներկայացնելու նպատակով: Բանակցությունների և հայկական բարենորոգումների շուրջ ստեղծված դիվանագիտական ամբողջ քաշքշուկի ընթացքում ազգային պատվիրակությունը, գործունեության կենտրոն ունենալով Փարիզը, մշտական շփման մեջ էր եվրոպական պետությունների կառավարող և ազդեցիկ շրջանակների հետ: Նպատակն էր նպաստավոր հանրային կարծիք ստեղծել Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի մյուս հայաբնակ վայրերում բարենորոգումների անցկացման օգտին: Այդ պատվիրակության առաքելությունն ավարտվեց հայկական բարենորոգումների վերաբերյալ 1914 թ. ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրմամբ, որն ընդգծում էր Ռուսաստանի ղեկավար դերը հայկական հարցում: Սկսված համաշխարհային պատերազմն ի չիք դարձրեց այդ համաձայնագրի իրականացումը և նոր չարիք բերեց հայ ժողովրդին՝ նրան մատնելով տեղահանության և աննախադեպ ջարդերի, որն էլ հետագայում որակվեց որպես Ցեղասպանություն: Ստեղծված նոր պայմաններում պատվիրակությունն իր եռանդն ուղղեց մեկ նպատակի՝ Անտանտի օգնությամբ Արևմտյան Հայաստանն ազատագրել օսմանյան տիրապետությունից: Գերազանցապես պատվիրակության և Պողոս Նուբարի ջանքերով էր, որ կազմակերպվեց Արևելյան կամ Հայկական լեգեոնը, որը ֆրանսիական զորքերի կազմում մասնակցեց մի շարք կարևոր ճակատամարտերի Պաղեստինում ու Սիրիայում, իսկ պատերազմի վերջում ստրատեգիական որոշ դիրքեր գրավեց Կիլիկիայում:

Ազգային պատվիրակությունը, 1919 թ., Փարիզ

5 **Տասնապետեան**, նույն տեղում, էջ 99

1918 թվականի վերջին Պողոս Նուբարը կրկնապատկեց իր ջանքերը Հայաստանի համար «պատերազմող կողմի» կարգավիճակ ապահովելու և առաջիկա հաշտության կոնֆերանսում տեղ ստանալու համար: Պողոս Նուբար Փաշայի պատվիրակությունը, իր գործունեությունը շարունակեց նաև հետպատերազմյան շրջանում (Փարիզի հաշտության կոնֆերանս (1919-1920), Սան Ռեմոյի կոնֆերանս 1920, Լոնդոնի կոնֆերանս 1921, Լոզանի կոնֆերանս 1922-1923 և այլն[6]:

Մաս 2. Գաղթաշխարհից՝ սփյուռք. Հայկական սփյուռքի քաղաքականացումը

Հայոց հողում պետականության շուրջ ութհարյուրամյա ընդմիջումից հետո անկախության վերականգնումն ու Հայաստանի առաջին Հանրապետության անկախության հռչակումը դարակազմիկ իրադարձություն էր, որն անխուսափելիորեն ազդեց նաև հայրենիք-սփյուռք հարաբերությունների որակական փոխակերպման վրա: Սա մի ժամանակահատված էր, որ Հայոց ցեղասպանությունից մազապուրծ հայությունը դեռ փորձում էր հարմարվել արտերկրի նոր պայմաններին: Արտերկրի հայությունը կամ համալրել էր արդեն իսկ գոյություն ունեցող համայնքները, կամ ստեղծում էր նորերը: **Հայաստանի Հանրապետության հռչակման նախօրյակին հայկական գաղթաշխարհի համար դեռևս բացակայում էին այնպիսի բնորոշիչներ, որոնք գաղթաշխարհը կվերածեին հայկական սփյուռքի:** Մասնավորապես, սփյուռքի հավաքական ինքնության պահպանումն ու զարգացումը, հայրենիքի և ընդունող երկրի ինստիտուցիոնալ միավորներից զատ, ներքին կազմակերպվածության առկայությունը, հայրենիքի հետ իրական և նշանակալի փոխհարաբերությունները[7], ինչպես նաև հավաքական նվիրումը հայրենիքի ապահովությանն ու բարգավաճմանը, հայրենիքի հետ անձնապես կամ միջնորդավորված շարունակական կապի ապահովումը այն հատկանիշներից մի քանիսն են, որ գաղթաշխարհը վերածում են սփյուռքի[8]: Թեև 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետությունը որոշ քայլեր ձեռնարկեց արտերկրի հայության հետ կապերի հաստատման ու զարգացման համար, այնուամենայնիվ, հանրապետության կարճատև գոյությունը թույլ չտվեց ամբողջապես ավարտին հասցնել ձեռնարկված ծրագրերն ու տեսնել իրականացված քայլերի արդյունավետությունը: Ամեն դեպքում, հիշատակության են արժանի հայաշատ քաղաքներում ՀՀ հյուպատոսությունների բացումները, 1920 թ. օգոստոսին ՀՀ արտաքին գործերի նախարարության համակարգում գաղութային բաժնի հիմնադրությունը և այլն: Որոշ քայլեր ձեռնարկվեցին նաև կրթական գործը խթանելու ուղղությամբ, ինչի արդյունքում 1919 թ. պետական ֆինանսավորումներ ստացան Ալեքսանդրապոլի, Կարսի, Բաքվի և Նուխու հայկական կրթական կենտրոնները:

Հայաստանի Առաջին Հանրապետության անկումից, ապա նաև Փետրվարյան ապստամբության անհաջող ելքից հետո Հայաստանի Հանրապետության՝ բոլշևիկյան վայրագություններից հրաշքով փրկված ղեկավարներն ապաստան գտան արտերկրի տարբեր համայնքներում՝ սկսելով կազմակերպել հայ գաղթաշխարհը՝ սկսած առաջին համայնքային կազմակերպությունների հիմնադրությունից մինչև ընդունող պետության հետ հարաբերություններ և միջազգային ակտիվություն՝ ի պաշտպանություն հայրենիքի և Հայ դատի գաղափարների: Այսպիսով, երկու հիմնական գործոններ՝ հայկական պետության երևան գալը և Հայաստանի Հանրապետության ղեկավարության հաստատումը սփյուռքում փոխակերպման ենթարկեցին հայկական գաղթաշխարհը՝ բարձրացնե-

6 Հայկական հարց հանրագիտարան, Երևան 1996, էջ 15-16

7 **Թորոսյան Տ., Սարաղյան Մ.,** Հայկական սփյուռքի հնարավորությունները և ազդեցությունը Հայաստանի Հանրապետության սոցիալ-քաղաքական գործընթացների վրա, Երևան, 2017 էջ 28

8 **Safran W.,** Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return, Diaspora, No. 1, Toronto 1991, 83-99

լով կազմակերպական և քաղաքական առումով որակապես նոր մակարդակի և սկիզբ դնելով հայկական սփյուռքի պատմությանը:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության գործունեությունը ՀՀ անկախության կորստից հետո

1918 թ. դեկտեմբերի 3-ին Հայաստանի Հանրապետության օրենսդիրը՝ Խորհուրդը, Ավետիս Ահարոնյանին նշանակեց Փարիզի Խաղաղության վեհաժողովին մեկնող պատվիրակության նախագահ: Պատվիրակության անդամներ ընտրվեցին Միքայել Պապաջանյանը (ՀԺԿ) և Համո Օհանջանյանը (ՀՅԴ): Խումբն ընդլայնվեց 1919 թ. գարնանը, երբ Փարիզ հասան զինվորական փորձագետ, գեներալ Գաբրիել Կորգանյանը և, իբրև վիճակագրության և տնտեսական հարցերի գծով փորձագետ՝ Արտեմ Փիրալյանը (ՀԺԿ): Առաջին քարտուղար նշանակվեց Տիգրան Միրզոյանցը (ՀՅԴ), որին աջակցելու համար նշանակվեցին մի շարք տեխնիկական օգնականներ և քարտուղարներ՝ Եվրոպայից:[9]

Չենք անդրադառնում մինչև Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումը ՀՀ պատվիրակության գործունեությանը, որովհետև, որպես հիմնականում պետական կառույց, այն դուրս է այս գրքույկի շրջանակներից, թեև նրա ձեռքբերումները շարունակում են մնալ ուղենշային՝ այսօր գործող ՀՅԴ Հայ դատի համակարգի համար:

Ըստ էության, Հայկական սփյուռքի նոր սկսվող քաղաքական գործունեության առաջին խոշոր դերակատարը դարձավ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը, որը Հայաստանի խորհրդայնացումից հետո համալրվեց Հայաստանի Առաջին Հանրապետության ղեկավար այրերով:

1920 թ. օգոստոսի 10-ին, Սևրի դաշնագրի ստորագրումից հետո, Փարիզում գտնվող հայկական պատվիրակությունը, Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ, այն մտայնությունն ուներ, որ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը ժամանակավոր մի գործընթաց է, ուստի շարունակում էր աշխատանքը հայության իրավունքների իրացման խնդիրը միջազգային տարբեր դերակատարների ներկայացնելու ուղղությամբ և մի օր Հայաստանում օրինական կառավարությունը վերականգնելու հույսով: Պատվիրակությունն աստիճանաբար սկսեց նաև համայնքային-կազմակերպական բնույթի աշխատանքներ տանել՝ փորձելով նախ ֆրանսահայ, ապա և՝ սփյուռքի այլ համայնքներում իրականացնել համախմբող գործառույթներ: Ըստ այդմ՝ պատվիրակությունը 1921 թ.-ից ուներ գործունեության երեք հիմնական ուղղու-

Սեւրի պայմանագրի ստորագրության արարողությունը, 1920 թ. օգոստոսի 10

9 **Ռիչարդ Գ. Հովհաննիսյան**, «Հայաստանի Հանրապետություն», Ա. հատոր, 2005 թ., Երևան, էջ 274-275

թյուն՝ արտաքին-քաղաքական, հյուպատոսական և համայնքային-կազմակերպական:

Դեռևս 1920 թ. դեկտեմբերի վերջին պատվիրակությունն ընդլայնված նիստում ընդունեց 5 կետանոց որոշում, որի մասին ծանուցեց դաշնակից պետություններին: Մասնավորապես, պատվիրակությունն արձանագրեց, որ Հայաստանի օրինական կառավարությունը գոյություն ունի, Հայաստանը նվաճված է օտար ուժերի կողմից, 1920 թ. դեկտեմբերի 2-ի հայտարարությունը կայացվել է ճնշման տակ, ուստի պետք է անվավեր համարվի, և որ խորհրդային իշխանությունների և Աթաթուրքի միջև եղել է Հայաստանի նվաճման մասին պայմանավորվածություն:

Իրենց հերթին՝ միջազգային տարբեր շրջանակներ, հիմնականում՝ տնտեսական գործունեություն հետապնդող կազմակերպություններ, հակառակ նրա, որ Հայաստանում իշխանությունը զավթված էր բոլշևիկյան ուժերի կողմից, կապվում էին Հայաստանի Հանրապետության պատվիրակության հետ՝ Հայաստանում տնտեսական աշխատանքներ իրականացնելու համար: Մասնավորապես, 1921 թ. Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը դիմումներ են հղվել Հայաստանում երկաթուղի կառուցելու, հանքահումքային ռեսուրսների արդյունահանման, գյուղատնտեսական ենթակառուցվածքների կառուցման և նմանատիպ այլ հարցերով: Շվեյցարական կողմը նույնիսկ պատվիրակությանն էր դիմել Հայաստանին պարենամթերային օժանդակության տրամադրման համար: Տարբեր առաջարկներ էին ստացվել նաև անգլիական, գերմանական, ամերիկյան, շվեդական և այլ երկրներ ներկայացնող կազմակերպություններից: Ինչպես ասվեց, պատվիրակությունը, որ կարծում էր թե Հայաստանի խորհրդայնացումը կարճաժամկետ իրողություն էր, մանրակրկիտ կերպով ուսումնասիրում էր ներկայացված ծրագրերն ու պահպանում համապատասխան հարաբերություններ:

ՀՅ Դաշնակցությունը 1924 թ. «Արտասահմանյան մարմիններու արտակարգ խորհրդաժողով»ից սկսած՝ իրարահաջորդ Ընդհանուր ժողովներով որոշել էր պահել Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը, հիմնականում՝ արտաքին հարաբերություններում մասնակից դարձնելու համար՝ նկատելով, որ «պատվիրակությունը, իբրև մեկ կարևոր մնացորդը մեր պետականության, միջազգային քաղաքականության նպաստավոր փոփոխության մը պարագային պիտի հանդիսանա անմիջական խողովակը հայ ժողովուրդի պահանջներուն և ներկայիս իսկ կրնա արժեվավոր դեր կատարել՝ ջատագով հանդիսանալով հայ ժողովուրդի պետական անկախության և անոր հետ կապված քաղաքական պանջներուն»:[10]

ՀՀ պատվիրակությունը նաև պահպանել էր հյուպատոսությունները, ապա դիվանագիտական նույն աշխատանքի համար հաստատել «գաղթականական օֆիսներ». 1938 թ. գումարված ՀՅԴ 13-րդ Ընդհանուր ժողովն արձանագրել է, որ «հինգ տարվան ընթացքին [ՀՀ պատվիրակության գաղթականական] օֆիսները տված են շուրջ 35,000 վկայաթղթեր և հայ գաղթականության համար դյուրություններ ստեղծած են անցագրային, զինվորական, դատական և այլ հարցերու մեջ:»[11]

Ինչ վերաբերում է համայնքային կյանքին և կազմակերպական բնույթի աշխատանքներին, ապա, ի թիվս այլնի, պատվիրակությունը փորձում էր հավաքագրել խորհրդայնացման հետևանքով Եվրոպայում և Պարսկաստանում ապաստան գտած հայ մտավորականության ու զինվորականության տվյալները՝ հետագայում նրանց կարողություններն ի սպաս հայրենիքին վերստին օգտագործելու նպատակադրմամբ: Ընդառաջելով պատվիրակության դիմումներին՝ ֆրանսիական և բելգիական կառավարություններն իրականացրեցին հայկական ապագա բանակի համար կադրերի պատրաստման աշխատանքներ:

Տարբեր պետություններ և կազմակերպություններ ներկայացնող անձանց հետ հանդիպումներին և հարաբերական բնույթի անընդհատական աշխատանքին զուգահեռ՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը մեծ ուշադրություն էր դարձնում քարոզչական-տեղեկատվական բնույթի աշխատանքներին: Լույս տեսան Հայ դատի, Հայաստանի պատմության, հայկական հարցի, Հայաստանին վերաբերող ազգագրական, վիճակագրական,

10 ՀՅԴ 12-րդ Ընդհանուր ժողով, 1933, Փարիզ

11 ՀՅԴ 13-րդ Ընդանուր ժողով, 1938, Կահիրե

տնտեսական, ինչպես նաև՝ բնական հարստություններին վերաբերող հսկայածավալ տպագիր նյութեր:[12]

1972 թ. Վիեննայում գումարված ՀՅԴ 20-րդ Ընդհանուր ժողովը, «Հետապնդում Հայ դատի» գլխի տակ, ի շարս այլոց, որոշել էր **«Վերջ տալ «Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութիւն» անունով գործող մարմնին և զայն փոխարինել «Հայ դատի կեդրոնական մարմին»-ով մը»:**[13]

Մաս 3. Հայ դատի համակարգի հիմնադրությունը ԱՄՆ-ում

Հայկական շահերի պաշտպանությունը ԱՄՆ-ում՝ 20-րդ դարի առաջին կեսին

20-րդ դարի առաջին քառորդում Ամերիկայի Միացյալ Նահանգներում հայկական շահերի պաշտպանության գործում առանցքային գործիչը Վահան Կարդաշյանն էր, ով ՀՅԴ անդամ չի եղել, մոտիկից համագործակցել է կուսակցության և ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Գարեգին Փաստրմաճյանի (Արմեն Գարո) հետ: ՀՅԴ-ի քաղաքական և ֆինանսական աջակցությամբ և գործակցաբար ամերիկյան և օտարազգի քաղաքական այլ գործիչների ու դիվանագետների հետ, Կարդաշյանը կարողանում է նախ հիմնադրել "The Press Bureau" (Պրես բյուրո) և, վերջինիս միջոցով՝ "American Committee for the Independence of Armenia" (Հայաստանի անկախության համար ամերիկյան կոմիտե) կազմակերպությունները, որոնք, ըստ էության, դարձան Ամերիկայում հայկական սփյուռքի քաղաքական գործունեության ժամանակի դերակատարները[14]:

"The Press Bureau"-ին հանձնարարված էր հայկական հարցին ի նպաստ քարոզչական աշխատանքներ տանելու, ամերիկյան քաղաքական, պետական և մամուլի շրջանակներում հայ ժողովրդի պահանջներն արծարծելու պարտականությունը:

1919 թ.-ին կազմավորված «Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտե»-ին (ACIA, American Committee for the Independence of Armenia) մասնակցում էին 75 ականավոր ամերիկացի գործիչներ, այդ թվում 3 նախկին նախագահական թեկնածուներ, 8 դեսպաններ, 25 նահանգապետեր, համալսարանների և քոլեջների տնօրեններ և այլն: Կազմությունից անմիջապես հետո, 1919 թ. մարտին ACIA-ն նախագահ Վիլսոնին ներկայացրեց Միացյալ Նահանգների 75 եպիսկոպոսների, 20000 այլ հոգևորականների, 40 նահանգապետերի և 250 քոլեջների ու համալսարանների տնօրենների անունից երկու դիմումագրեր՝ Հայաստանի անկախության պահպանման և հայկական իրավունքների արժևորման խնդրանքով:

Վահան Կարտաշյան

Իր գործունեության կարճ ժամանակահատվածում կոմիտեն լույս ընծայեց 21 տարբեր հրատարակություններ՝ 21000 տպաքանակով, ուղարկեց տասնյակ հազարավոր նամակներ[15]: Կոմիտեի գործունեության դաշտը հիմնականում

12 **Վահան Փափազեան,** «Իմ հուշերը», Կահիրե, 1957, էջ 145-157

13 ՀՅԴ 20-րդ Ընդհանուր ժողով, 1972, Վիեննա

14 **Գէորգ Տօնապետեան,** «Հ. Յ. Դաշնակցութիւնը Հիւսիսային Ամերիկայի մէջ», Բ. հատոր, 1910-1923 թթ., Պոսթոն, 1995, էջ 467

15 **Յարութիւն Քիւրքճեան**, խմբ., «Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան», Դ. հատոր, 1981-1992 թթ., Աթենք, 1995, էջ 306

ընդգրկում էր մամուլը և ամերիկյան Կոնգրեսը:

«Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեի» կարճատև, սակայն բուռն գործունեության հիմնական արդյունքներից կարելի է հիշատակել Ամերիկայի հայկական սփյուռքի քաղաքականացումը, ամերիկյան դաշնային և նահանգային իշխանության կարևորագույն օղակների հետ մշտական կապի հաստատումը, մամուլի հետ աշխատանքի փորձը, իսկ գործնական արդյունքներից հատկանշելի են 1920 թ. ապրիլի 23-ին ԱՄՆ-ի կողմից Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչումը և 1923 թ. ստորագրված ամերիկաթուրքական առևտրային և բարեկամական համաձայնագրի վավերացման մերժումը ԱՄՆ Սենատի կողմից՝ 1927 թ. հունվարի 19-ին, ինչին նախորդել էր տարիների քրտնաջան աշխատանք[16]:

Հայ դատի հանձնախմբի ձևավորումը

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում և նրանից հետո հայ հասարակության գիտակցության մեջ դեռևս ընդհանրացած չէր այն միտքը, թե հայ ժողովուրդն արդյո՞ք պետք է գնա Հայկական հարցի, Հայ դատի հավաքական պաշտպանության ուղղությամբ: Այդ հարցի պատասխանը չափազանց կարևոր էր նոր ձևավորվող աշխարհակարգի նախօրյակին հայության ճշգրիտ դիրքավորման տեսանկյունից: Կարելի է եզրահանգել, որ 1940-ականների կեսերին հայության կյանքում գերակշռում էին երկու հիմնական քաղաքական հոսանք: Հայության մի մասը, որն առաջնորդվում էր «առանց խորհրդային իշխանության՝ «չկա փրկություն» նշանաբանով, գտնում էր, որ սփյուռքի հայությունը քաղաքական առումով որևէ անելիք չունի, և, որ խորհրդային իշխանությանն է վերապահված ամեն իրավունք ու պարտականություն՝ արծարծելու և պաշտպանելու Հայկական հարցը: Այս հոսանքի ներկայացուցիչները նաև գտնում էին, որ սփյուռքի կողմից Հայ դատի պաշտպանության առումով որևէ քայլ կամ գործողություն ուղիղ միջամտություն կլինի խորհրդային իշխանության և Խորհրդային Հայաստանի ներքին գործերին:


A Memorandum

TO THE HONORABLE
CHARLES EVANS HUGHES
SECRETARY OF STATE OF THE UNITED STATES

BY

THE AMERICAN COMMITTEE FOR THE
INDEPENDENCE OF ARMENIA

AGAINST THE PROPOSAL OF

AN "ARMENIAN HOME" IN TURKEY

Հայության մյուս մասը, ՀՅ Դաշնակցության առաջնորդությամբ, պնդում էր, որ պատերազմը և դաշնակիցների հաղթանակը պատեհ առիթ են՝ արծարծելու Հայ դատի խնդիրները, քանի որ Հայաստանն ի վիճակի չէր ստանձնել այդ նախաձեռնությունը, իսկ արտասահմանի հայությունը, իբրև թրքահայ հողերի սեփականատեր և Հայ դատի ժառանգորդ, կարող էր հանդես գալ սեփական իրավունքների պաշտպանությամբ:

Այս երկու հակընդդեմ հոսանքների միջև, գլխավորապես մամուլում, տևական ժամանակ բուռն վիճաբանություններ տեղի ունեցան: Դրանց պայմաններում ՀՅ Դաշնակցությունը որոշ գործնական քայլերի դիմեց՝ համոզելու հակառակ տեսակետներ ունեցողներին՝ Հայ դատի պաշտպանության համար ստեղծել ազգային միացյալ ճակատ: Ձեռնարկված միջոցառումները, սակայն, արդյունք չտվեցին:

ՀՅ Դաշնակցությունը ստիպված եղավ իր սեփական ուժերով նախաձեռնել Հայ դատի պաշտպանության գործը, աշխարհի քաղաքական նոր քարտեզագրման ու ազդեցության գոտիների վերաբաժանման նախօրյակին ձևակերպել հայ ժողովրդի բաղձանքները և սահմանել Հայ դատի առանցքային բանաձևը՝ թրքահայ հողերի կցումը Հայաստանի Հանրապետության և տարագիր հայության վերադարձը հայրենիք: 1944 թ. սկզբին իրականացվեց Հայ դատի պաշտպանության ֆոնդի հանգանակու-

16 **Յարութիւն Քիւրքճեան**, նույն տեղում, էջ 306-307

թյուն, ինչին, ամերիկահայության խանդավառ արձագանքի պայմաններում, հավաքվեց շուրջ 165.000 ԱՄՆ դոլար (այսօրվա արժեքով՝ շուրջ 1.75 միլիոն դոլար):

Ինչպես ասվեց, համազգային մարմին ստեղծելու անհաջող փորձերից հետո, 1944թ. վերջին Նյու Յորքում իր գործունեությունն սկսեց Հայ դատի հանձնախումբը՝ անկախ Հայաստանի Հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանի ընդհանուր համակարգմամբ: Հանձնախմբին վստահվեց Հայ դատի պաշտպանության գործի՝ քաղաքական, քարոզչական, կազմակերպչական լայն գործիքակազմի կիրառմամբ:

Հայ դատի հանձնախումբը, որ ամերիկյան շրջանակներում հանդես էր գալիս "Armenian National Committee" անվամբ, իր գործունեությունն սկսեց 1944 թ. դեկտեմբերին և առաջին իսկ նիստով ընդունեց իր գործունեության ծրագիր-ուղեցույցը, որի առանցքային կետերն էին.

- «Հայ դատ» ասելով՝ հանձնախումբը հասկանում է նախագահ Վիլսոնի սահմանագծած թրքահայ հողերի կցումը Խորհրդային Հայաստանին և տարագիր հայության վերաբնակեցումը հայկական հողերի վրա:
- Օգտակար և ցանկալի նկատել ազգային բոլոր ուժերի գործակցությունը Հայ դատի հետապնդման շուրջ:
- Եթե Խորհրդային Հայաստանի իշխանությունն ինքը ստանձնի Հայ դատի հետապնդումը, Հայ դատի հանձնախմբի գործը պետք է լինի նրան աջակցելը:
- Հայ դատի հանձնախումբը պետք է Հայ դատը ներկայացնի ամերիկյան կառավարությանն ու հանրային կարծիքին, ինչպես նաև՝ միջազգային հարաբերություններում, քաղաքական այն ուժերին և ժողովներին, որոնք կարող են դերակատարություն ունենալ Հայ դատի լուծման գործում:
- Իր նպատակին հասնելու համար Հայ դատի հանձնախումբը դիմումներ է ներկայացնելու ամերիկյան կառավարությանը, միջազգային խորհրդաժողովներին, հրատարակելու է նյութեր Հայ դատի մասին՝ ջանալով այն արծարծել մամուլում:



ARMENIAN

BULLETIN

ISSUED BY THE ARMENIAN NATIONAL COMMITTEE

MARCH, 1946 NUMBER 5

THE ARMENIAN QUESTION - AN INDEPENDENT ISSUE

There is a general tendency among the press, radio commentators and consequently the public, to confuse the basic issues of the Armenian Question with the complex problems of the Near East. It is not difficult to discover the reasons for this tendency but the reasons are not complimentary to the perceptive powers of our newsmen nor to the intentions of some of the leading statesmen of some of our democratic powers.

The causes of confusion are first, lack of familiarity with the Armenian Question and its issues as distinguished from the many problems of the Near East; public apathy towards any question or the plight of any people not directly bearing on its own welfare; and the desire of those Powers who have great interests in preserving Turkey's strength and who have made significant promises and commitments to the

Ծրագրային այս հիմնական սկզբունքներից բացի, պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև գործնական բնույթի այլ հարցերի վերաբերյալ: Մասնավարապես՝ 1945 թ. սկզբին Նյու Յորքում հաստատվեց Հայ դատի հանձնախմբի գրասենյակը:

Հայ դատի հանձնախմբի առաջին ակնառու աշխատանքը եղավ՝ հիշեցնել պետություններին Հայ դատի գոյության և դրա լուծման անհրաժեշտության մասին: Այդ նպատակով մարտ և ապրիլ ամիսներին հուշագրեր ներկայացվեցին ամերիկյան, անգլիական և խորհրդային կառավարություններին: Հանձնախմբի ներկայացուցիչներն ունեցան նաև անձնական հանդիպումներ՝ անհրաժեշտ բացատրություններ կատարելու նպատակով:

Հանձնախմբի երկրորդ քայլը եղավ՝ Հայ դատի խնդիրներն արծարծել Միացյալ Ազգերի Կազմակերպության Սան Ֆրանցիսկոյի խորհրդաժողովի ընթացքում: 1945 թ. հունիս 7-ին հանձնախումբը խորհրդաժողովին և դրան մասնակցող բոլոր պետությունների պատվիրակություններին տրամադրեց ընդարձակ և հիմնավոր հուշագիր: Վերջինս խորհրդաժողովի մասնակիցների կողմից դրական ընկալման արժանացավ, ինչպես նաև արձագանք ունեցավ ամերիկյան և միջազգային մամուլում: Հայ դատի հանձնախումբը նաև ռադիոժամ ունեցավ Սան Ֆրանցիսկոյում, որի ընթացքում արծարծվում էին Հայ դատին առնչվող նյութեր: Այդ ռադիոժամը նույնպես, հանրային ջերմ արձագանք գտավ:

Շուրջ մեկ ամիս անց, հուլիսի 8-ին, Ամերիկահայ ազգային խորհուրդը՝ ռամկավար, ինչակյան և հայ բոլշևիկյան կազմակերպությունների միությունը, իր կողմից հուշագիր հանձնեց Սան Ֆրանցիսկոյի խորհրդաժողովի մասնակիցներին՝ կրկնելով նույն պահանջները, որոնք Հայ


A MEMORANDUM RELATING TO THE ARMENIAN QUESTION

Issued by
ARMENIAN NATIONAL COMMITTEE
(April, 1945)

դատի հանձնախումբն էր ներկայացրել:

Սան Ֆրանցիսկոյի խորհրդաժողովին նարկայացված պահանջները հետզհետե որդեգրվեցին նաև այլ երկրներում գործող հայկական միությունների կողմից: Խորհրդային Հայաստանի ժողովուրդն ու կառավարությունը ևս միացան արտասահմանի հայությանը[17]:

Իր հերթին, Էջմիածնում գումարված Ազգային եկեղեցական ժողովն էլ հանդես եկավ Հայ դատի պաշտպանության դիրքերից, ինչից հետո 1945 թվականի նոյեմբերի 29-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ 6-րդը, դիմելով ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարներին, ինչպես նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության քարտուղարին, կարծես թե ամբողջացրեց հայության պահանջների համահայկական բնույթը:

Այսպիսով, այն գործը, որը ձեռնարկվեց Հայ դատի հանձնախմբի կողմից Սան Ֆրանցիսկոյի խորհրդաժողովին ներկայացված պատմական հուշագրով, ի վերջո, յուրացվեց ամբողջ ազգի կողմից և դարձավ համազգային քաղաքական ծրագիր՝ Հայաստանի և արտասահմանի հայության գրեթե բոլոր խավերի համար:

Հակառակ իր դեմ հարուցված անհարկի դժվարություններին՝ Հայ դատի հանձնախումբը ծրագրված ուղիով շարունակեց իր աշխատանքները և հուշագրեր ներկայացրեց Պոտսդամի խորհրդաժողովին, հաղթող երեք խոշոր երկրների նախարարների Լոնդոնի և Մոսկվայի ժողովներին, ՄԱԿ-ի տարբեր ժողովներին, ԱՄՆ պետքարտուղարությանը և այլն: Կուբայում հիմնադրված Հայ դատի տեղի հանձնախմբի միջոցով Հայ դատի հանձնախումբը հուշագրեր ներկայացրեց հարավամերիկյան 20 երկրների կառավարություններին: Առհասարակ, դիմումներ էին ներկայացվում բոլոր այն վայրերում, որտեղ նպատակահարմար էր ու հնարավոր:

Բացի քաղաքական այս քայլերից, Հայ դատի հանձնախումբն աշխատանք տարավ նաև Հայ դատի վերաբերյալ հանրային կարծիքի նպաստավոր դիրքավորման ուղղությամբ: Մամուլով, հրապարակային ժողովների ընթացքում և այլ միջոցներով լուսաբանվում էին Հայ դատի նպատակները: Հրատարակությունների ժամանակ շեշտը դրվում էր անգլիալեզու նյութերի վրա, որոնք ամենատարբեր միջոցներով ուղարկվում էին պետական մարմիններին, քաղաքական ու հանրային գործիչներին, ինչպես նաև՝ մամուլի ներկայացուցիչներին:

Մաս 4. Հայ դատի հանձնախմբերի ու գրասենյակների հետագա ընդարձակումն ու ներկայիս ցանցը

Հայոց Ցեղասպանության հիսունամյակի առիթով Սփյուռքի բոլոր համայնքներում Դաշնակցությունը կազմեց հատուկ հանձնախմբեր, որոնք էլ այնուհետև կոչվեցին Հայ դատի հանձնախմբեր և առայսօր գործում են աշխարհի շուրջ երեսուն երկրներում:

Հայ դատի կառույցը բաղկացած է շուրջ յոթ տասնյակի հասնող և աշխարհի շուրջ երեսուն երկրում գործող տարածաշրջանային, շրջանային, նահանգային և քաղաքային մակարդակների վրա աշխատող հանձնախմբերից:

17 **Arman J. Kirakossian**, Ed., “Armenia and Soviet-Turkish Relations in Diplomatic Documents, 1945-1946”, Antelias, 2018, pp. 79-81

Հանձնախմբեր

Տարածաշրջանային հանձնախմբեր

Հայ դատի տարածաշրջանային հանձնախմբերն են՝ Ամերիկայի Միացյալ նահանգների (Armenian National Committee of America), Եվրոպայի (European Armenian Federation for Justice and Democracy), Հարավային Ամերիկայի, Ռուսաստանի, Մերձավոր Արևելքի հանձնախմբերը, որոնք բոլորն էլ ունեն Հայ դատի գրասենյակներ:

Շրջանային հանձնախմբեր

Հայ դատի շրջանային հանձնախմբեր են գործում Կանադայում, Ավստրալիայում, ԱՄՆ Արևմտյան և Արևելյան ափերում, Լիբանանում, Ուրուգվայում, Բրազիլիայում, Ավստրիայում, Բելգիայում, Բուլղարիայում, Կիպրոսում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Հունաստանում, Միացյալ Թագավորությունում, Կիպրոսում, Իտալիայում, Հոլանդիայում, Լեհաստանում, Իսպանիայում, Շվեդիայում, Եգիպտոսում, Երուսաղեմում, Իրանում (Թեհրանում [Հայկական հարցերի ուսումնասիրութեան կենտրոն, ՀՈՒՍԿ] և Նոր Ջուղայում), Սիրիայում, Իրաքում, Պարսից Ծոցի մի շարք երկրներում և այլուր:

Նահանգային և քաղաքային հանձնախմբեր

Հայ դատի համակարգում նահանգային կամ քաղաքային հանձնախմբեր են կոչվում այն հանձնախմբերը, որոնց գործունեության տիրույթն ընդգրկում է որևէ պետության որևէ նահանգի կամ քաղաքի տարածքը: Այդպիսի հանձնախմբեր շատ կան հատկապես Ամերիկայի Միացյալ նահանգներում և Կանադայում:

Գրասենյակներ

Միջազգային քաղաքական կյանքի կարևոր մայրաքաղաքներում՝ Վաշինգտոնում, Բրյուսելում, Մոսկվայում և Բեյրությում վերջին տասնամյակներում գործում են Հայ դատի գրասենյակներ: Դրանք, պայմանավորված գործունեության տիրույթի լայն ընդգրկմամբ, Հայ դատի համակարգում կոչվում են տարածաշրջանային գրասենյակներ:

Տարածաշրջանային գրասենյակներից զատ, Հայ դատի գրասենյակներ են գործում նաև այլ երկրներում և տարածքներում, օրինակ՝ Սիդնեյում, ԱՄՆ Արևմտյան և Արևելյան ափերում՝ համապատասխանաբար՝ Գլենդելում և Վոթրթաունում, Օտտավայում, Տորոնտոյում, Բուենոս Այրեսում, Փարիզում, Աթենքում և այլուր:

2016 թ.-ից գործում է նաև ԱՄՆ-ում գրանցված Մարդու իրավունքների և արդարության հայկական իրավական կենտրոնը:

Հայ դատի ցանցի որոշ աշխատանքներին մասնակցում են նաև «Արևմտահայության հարցերի ուսումնասիրության կենտրոն» գիտահետազոտական հիմնադրամը, ՀՅԴ Բյուրոյի Երիտասարդական գրասենյակը և ՀՅԴ ներկայացուցչությունները Եվրոպական սոցիալիստական կուսակցությունում (Party of European Socialists) և Սոցինտերնում (Socialist International, Ընկերվար Միջազգայնական):

Կենտրոնական խորհուրդ և գրասենյակ

Հայ դատի համաշխարհային կառույցի աշխատանքները համադրում է ՀՅԴ Հայ դատի կենտրոնական խորհուրդը: Վերջինս բաղկացած է կենտրոնական խորհրդի նախագահից, տարածաշրջանային գրասենյակների պատասխանատուներից, Հայ դատի երախտավորներից, ինչպես նաև ՀՅԴ Հայաստանի և Արցախի կառույցների ներկայացուցիչներից: Հայ դատի Կենտրոնական խորհրդի ղեկավարման ներքո Երևանում գործում է Հայ դատի Կենտրոնական գրասենյակը, որը պատասխանատու է Կենտրոնական Խորհրդի որոշումների գործադրման, Հայ դատի աշխատանքների համադրման, ինչպես նաև ՀՅԴ Բյուրոյի միջազգային հարաբերությունների սպասարկման համար:

Ռազմավարական նպատակադրումներ

- Արցախյան հիմնախնդրի արդար հանգուցալուծում՝ վերադարձի և ինքնորոշման իրավունքների կիրառման շրջանակում.
- Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացում.
- Միջպետական հարաբերություններում և խորհրդարանական դիվանագիտության

հարթակներում Հայաստանի Հանրապետությանն օժանդակություն.

- Հայոց ցեղասպանության ճանաչում, դատապարտում և վնասի հատուցումներ.
- Ջավախքի հայության իրավունքների պաշտպանություն:

Մարտավարական առաջնահերթություններ

- Ադրբեջանին իր կատարած ցեղասպանական գործողությունների համար պատասխանատվության ենթարկում և պատժամիջոցների կիրառում.
- Արցախի հայության՝ միջազգայնորեն երաշխավորված վերադարձի ապահովում.
- Ադրբեջանում պահվող՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության. ռազմագերիների, այլ պահվող անձանց ազատ արձակում.
- Հայաստանին հումանիտար օժանդակության տրամադրում՝ արցախահայության կարիքները հոգալու համար.
- Հայաստանին տնտեսական և ռազմաքաղաքական, այդ թվում ռազմատեխնիկական օժանդակության տրամադրում.
- Ադրբեջանական հերթական ագրեսիայի կանխում և Հայաստանի պաշտպանությանն օժանդակություն.
- Մարդու իրավունքների խախտումների ուսումնասիրություն և դրանցից բխող միջազգային իրավական, դատական և իրավաքաղաքական գործընթացների նախաձեռնում.
- «Եվրոպացիները հանուն Արցախ»-ի հարթակի օրինակով, Արցախի իրավունքների պաշտպանությանն ի նպաստ միջազգային և տարածաշրջանային հարթակների ստեղծում/օժանդակություն.
- Միջազգային իրազեկվածության բարձրացում՝ տարբեր միջոցառումների միջոցով, այդ թվում՝ խորհրդաժողովներ, հայկական և միջազգային պատվիրակությունների փոխադարձ այցելություններ:

FREE ARMENIAN PRISONERS AND HOSTAGES
www.europeanforartsakh.eu
EUROPEANS FOR ARTSAKH

DIASPORA SUPPORTS
THE TAVUSH MOVEMENT
Pan-European Mobilization, 12 May
+ New cities
AUSTRIA Vienna
BELGIUM Brussels
BULGARIA Varna | Sofia | Plovdiv | Ruse
CYPRUS Nicosia
DENMARK Copenhagen
FRANCE Alfortville | Arnouville | Decines | Grenoble | Issy les Moulineaux | Lyon | Marseille | Nice | Paris | Valence
GEORGIA Thilisi | Akhalkalaki | Akhaltsikhe
GERMANY Munich | Berlin | Freiburg | Duisburg
GREECE Athens | Piraeus | Thessaloniki | Thrace
NETHERLANDS Almelo
ROMANIA Bucharest | Constanta | Iași | Suceava
SWEDEN Orebru | Södertälje | Stockholm | Västerås
UNITED KINGDOM London | Manchester
#ՀԱՆՈՒՄԸՀԱՅՐԵՆԻՔԻ


ENDING THE
GAG-RULE
The House overwhelmingly adopts H.Res.296, overriding the longest-lasting foreign veto in U.S. history: Ankara's gag-rule against honest American remembrance of the Armenian Genocide.
anca.org

AUSTRALIAN FRIENDS OF ARTSAKH

ADOPTED!
European Parliament Condemns Azerbaijan's Ethnic Cleansing in Nagorno-Karabakh